1920ին աբեղայ կը ձեռնադրուի Ս. Էջմիածնի մէջ և կը կարգուի երաժիշտ Մայր տաճարի և դեղագործ Մայր Աթոռոյ. 1921ին օգն. լսպ.ի։ Հայրապետական կոնդակով հոգևոր հովիւ կ'ընտրուի Եթովպիոյ հայոց, և 1925 Փետր. 6ին կը ձեռնարկէ պաշտօնին և երեք տարի պաշտօնավարելէ յետոյ 1928ին կը հրաժարի և կը մեկնի։

1928 Փետր.ին Յովսէփ վրդ. Ատիս-Ապապայէն կուգայ Երուսաղէմ և կ'այցելէ Ս. Տեղերը, կը հիւրընկալուի Ս. Յակոբի վանքը և Տն. Ժողովի հաւանութեամբ կը ծառայէ Ս. Տեղերուն։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԿԵՍԱՐԱՑԻ.— Մբ. Նւ. Թօխատի. 1696ին կը յիշատակուի Մինաս Ամգեցիին Օրագրութեան մէջ։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԿԵՍԱՐԱՑԻ.— Մբ. Նւ. Կեսարիոյ և Դաղատիոյ. յետոյ Առ. Թօխատի 1751ին. (Նալեան. էջ 250)։ Կը վախճանի 1770ին և կը թաղուի Պէյօղլուի ազգ. գերեզմանատան մէջ, Հոգևոր տիրոջ շիրմին մօտ. իր տապանագիրն է հետևեալը։

«Այս է տապան հանգոստեան
Ի քաղաքն Կեսարացի ի գիւղէն
Նիչիացի՝ հանգուցեալ, զիւմ
պիւլ խալիֆայի որդի Յոհաննէս
եւ Օհաննէսի որդի Յովսէփ աստուածա
բան արհիեպիսկոպոսին, Երուսաղէմայ
Մշակ՝ հարազատ և երախտաւոր
Նըվիրակ՝ եւ առաջնորդ ի քաղաքն
Թօխաթու, թվին ՌՄԺԹին» (1219+
551=1770) (Հա. 1929, էջ 412)։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ.— Մբ. կը վախճանի 1636ին, համաձայն տապանագիրին որ է հետևեալը. «Այս է տապան Յովսէփ վարդապետին, հանգեաւ թվին ՌՁԵ (=1636) ամին»։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ.— Մբ. աշկ. Եղիազար կթղ.ի Երուսաղէմի մէջ, Փկե. (1659—1660). Ընդհ. Նւ. Եղիազար կթղ.էն կարգուած մասնաւոր կոնդակով մը, (Նամակաբի. անտիպ)։ Առ. Զմիւռնիոյ 1661ին. կը վերաշինէ 1681ին Զմիւռնիոյ եկեղեցին որ երկրաշարժէն խարխլած էր. 1686ին կը մեկնի Վենետիկ